Գիտություն

ՀՈՒՆԻՍ
№ 6
(295)
2016 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ՀՀ ԳԱԱ-ում կայացան ԳԱԱ կառավարման մարմինների ընտրությունները

ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում վերընտրվեց ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ

Սույն թվականի հունիսի 27-ին և 28-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում կայացան ՀՀ ԳԱԱ կառավարման մարմինների՝ նախագահի, փոխնախագահի, ակադեմիկոս-քարտուղարի ընտրությունները: ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովին 159 հոգուց մասնակցում էին 135-ը: Վլադիմիր Բարխուդարյանը ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնի համար առաջադրեց ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի թեկնածությունը:

Իր ելույթում ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը ժողովին յուրովի հաշվետվություն տվեց անցած ժամանակաշրջանի համար: Նա մասնավորապես ասաց. «Մեզ հաջողվեց ձեզ հետ միասին ստեղծել 5 գիտական կենտրոններ, որտեղ ընդգրկվեցին նաև այլ գերատեսչությունների կազմում գտնվող կարևոր հնստիտուտներ: ...Հաջորդ հարցը տնօրենների սերնդափոխությունն էր, և մենք ունեցանք տնօրենների մի սերունդ, որը փայլուն դրսևորեց իրեն, և այսօր գիտության դրական միտումը պայմանավորված է այդ տնօրենների նվիրված աշխատանքով ևս: ...2011թ-ին Ազգ-ն ընդունեց «Գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքը, որով ստեղծեց իրավական դաշտ ԳԱԱ-ի համար: Դրա հիման վրա ստեղծվեց ԳԱԱ կանոնադրությունը, որով մենք առաջնորդվում ենք: ...Կարևոր քայլ էր ՀՀ ԳԱԱ համակարգում արտասահմանյան անդամների ինստիտուտի ստեղծումը, ինչի հաշվին մեկ տարվա ընթացքում 50-ից ավելի ծրագրերում մասնակցեցին սփյուռքահայ գիտնականներ»:

Ռադիկ Մարտիրոսյանը նաև կարևորեց սոցիալական խնդիրները՝ նշելով միջին աշխատավարձի բարձրացումը մինչև 100. 000 դրամ, ակադեմիայի աշխատակիցների համար նախատեսված սոցիալական փաթեթը, երիտասարդ գիտնականների համար իրականացված բնակարանաշինությունը, որը շարունակվում է, գիտաշխատողների համար երկարացված արձակուրդի վերադարձը, գիտական աստիճանի համար տրվող հավելավճարների ավելացումը և այլն:

Որպես գալիք տարիների գործունեության ուղենիշեր Ռադիկ Մարտիրոսյանը նշեց. «Առաջին ուղենիշը մեր հիմնարար հետազոտությունների արդիականացումն է: Մյուսը կիրառական հետազոտությունների ինտենսիվացումն է և այնպիսի աշխատանքներ, որոնք տալիս են ռեալ արդյունք՝ հատկապես երկրի պաշտպանության համար: Մյուսը գիտական ակտիվության չափանիշների և գիտական ակտիվության գնահատականների համակարգի ներդրումն է, որը արդեն կատարվում է:

Սոցիալական հարցերը պետք է լինեն մեր ուշադրության կենտրոնում: Ընդհանուր աշխատավարձի բարձրացում պետք է լինի, պետք է լուծում ստանա գիտական աստիճանի հավելավճարները թոշակին միացնելու հարցը, պետք է բարելավվեն մեր աշխատանքային պայմանները և տեխնիկական բազան: Մենք ունենք նոր հնարավորություններ, որոնք ստեղծված են միջազգային համագործակցության համար, մասնավորապես, «Հորիզոն 2020» միջազգային ծրագիրը հնարավորություն կընձեռի լրացուցիչ միջոցներ ստանալ»:

Քվեարկության արդյունքներով ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ նախագահի պաշտոնում:

ՀՀ ԳԱԱ նախագահի ընտրությունների արդյունքների հրապարակումից հետո ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ՀՀ ԳԱԱ փոխնախագահի պաշտոնում առաջադրեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Շուքուրյանի, իսկ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանի թեկնածությունները, որոնք էլ վերընտրվեցին իրենց պաշտոններում:

***

Հունիսի 28-ին տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ 5 բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ՀՀ ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները: ՀՀ ԳԱԱ մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը: Նա այս պաշտոնում փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Նորայր Առաքելյանին: ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար ընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Կոստանյանը: Նա փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Չիլինգարյանին: ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը: Նա այս պաշտոնում փոխարինելու է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վիլեն Հակոբյանին: ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Թավադյանը, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

ՀՀ ԳԱԱ նախագահության անդամներ ընտրվեցին ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Վանիկ Զաքարյանը, էդուարդ Ղազարյանը, Գագիկ Ղազինյանը, Գևորգ Պողոսյանը, Աշոտ Սաղյանը, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամներ Արամ Սիմոնյանը, Արսեն Հախումյանը:

Տեղի է ունեցել ՀՀ նախագահի՝ 2015 թվականի մրցանակների հանձնման արարողությունը

ՀՀ նախագահի նստավայրում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2015 թվականի մրցանակների հանձնման արարողությունը: Հիմնումից ի վեր (2001-2016 թթ.) 335 անհատներ և կազմակերպություններ արժանացել են այդ պատվավոր պարգևին:

Մի շարք բնագավառներում ներդրած նշանակալից ավանդի համար շնորհված մրցանակները՝ համանուն վկայագիրը և դրամական պարգևը, մրցանակակիրներին են հանձնել նախագահ Սերժ Սարգսյանը և «Ռոբերտ Պողոսյան և որդիներ» հիմնադրամի ներկայացուցիչ, սփյուռքահայ բարերար Ալբերտ Պողոսյանը: Սերժ Սարգսյանը շնորհավորել է մրցանակի արժանացածներին, նոր հաջողություններ մաղթել նրանց հետագա գործունեության ընթացքում:

Ֆիզիկայի զարգացման բնագավառում հանրապետության նախագահի՝ 2015 թվականի մրցանակին են արժանացել Արթուր Իշխանյանը, Տիգրան Շահվերդյանը և Տիգրան Իշխանյանը «Քվանտային երկմակարդակ խնդրի անալիտիկ մոդելներ» գիտական հոդվածների շարքի համար:

Հումանիտար գիտությունների զարգացման բնագավառում մրցանակի է արժանացել Ալբերտ Խառատյանը «Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922)» աշխատության համար:

95 տարի առաջ՝ հունիսի 2-ին՝ ճիշտ նույն օրը

2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինը՝ Բունդեսթագը, մեկ դեմ, մեկ ձեռնպահ ձայներով 1915 թ. Արևմտյան Հայաստանում Օսմանյան Թուրքիայի իրականացրած ջարդերը ճանաչեց որպես ցեղասպանություն:

95 տարի առաջ՝ ճիշտ նույն օրը, Բեռլինի դատարանն անմեղ հռչակեց Սողոմոն Թեհլիրյանին, մարդու, որն օրը ցերեկով Բեռլինի կենտրոնում մարդ էր սպանել, սակայն մարդասպան չէր:

Թերևս ճշմարիտ է, աշխարհում ոչինչ պատահական չի լինում:

Մենդելեևի աղյուսակի 118-րդ տարրը հայ գիտնականի պատվին

Ինչպես հայտնել է Տեսական և կիրառական քիմիայի միջազգային միությունը, Մենդելեևի տարրերի աղյուսակում կարող են չորս նոր անուններ հայտնվել: Խոսքը քիմիական նոր տարրերի՝ նիխոնի, մոսկովիումի, թենեսինի և օգանեսսի մասին է: Ըստ այդմ՝ նիխոնը՝ Nh, զբաղեցնելու է Մենդելեևի աղյուսակի 113 համարը, մոսկովիումը՝ Mc՝ 115 համարը, թենեսինը՝ Ts, աղյուսակում 117 համարն է:

Ինչ վերաբերում է օգանեսսին՝ Og (118), ապա այս տարրն այդպես է կոչվել ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի միջուկային ռեակցիաների լաբորատորիայի գիտական ղեկավար, ՌԴ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Յուրի Հովհաննեսյանի անվամբ: Վերը նշված տարրերի անունները, սակայն, վերջնական չեն և կարող են փոփոխվել:

Ակադեմիական նոր հրատարակություններ

1. Ավ. Իսահակյան - Երկերի լիակատար ժողովածու, հ. VII:
2. Ռ. Զարյան - Մայրամուտից առաջ: Ինքնապատում, հ. IV:
3. Վ. Բարխուդարյան - Ուրվագիծ միջնադարյան հայկական մշակույթի պատմության(X-XIV դդ.):
4. Վ. Հարությունյան, Ռ. Սարինյան - Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում (2006-2016թթ.):
5. Ա. Գասպարյան - Արաբ ազգայնականները և երիտթուրքերը. համագործակցությունից առճակատում (1908-1914թթ.):
6. Արշալույս քրիստոնեության հայոց: Միջազգային գիտաժողով. զեկուցումների դրույթներ:
7. Ա. Հովհաննիսյան - Հայերի ունեզրկման գործընթացը Օսմանյան կայսրությունում և քեմալական Թուրքիայում:
8. Գարդմանի և Շիրվանի հայության պատմամշակութային ավանդները (պատմություն և արդիականություն). հանրապետական գիտաժողովի զեկուցումներ և զեկուցումների դրույթներ:
9. Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն (1909-1914թթ.):
10. Հայոց նորագույն պետականության քառորդ դարը. գիտաժողովի զեկուցումների դրույթներ:

Նոբելյան օրեր Երևանում

Ապրիլի 11-16-ը Հայաստանում անցկացվեց «Նոբելյան օրեր» միջոցառումը: Կազմակերպիչը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանն էր (համակարգող հանձնաժողովի նախագահ՝ ԵՊԲՀ գիտության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Կոնստանտին Ենկոյան): Միջոցառման բացմանը ներկա էին և ողջույնի խոսք ասացին ՀՀ փոխվարչապետ Վաչե Գաբրիելյանը, ՀՀ ԿԳՆ նախկին նախարար, ԵՊԲՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Արմեն Աշոտյանը, ԵՊԲՀ ռեկտոր Միքայել Նարիմանյանը:

Միջոցառման շրջանակներում մեր երկիրը հյուրընկալեց Նոբելյան մրցանակի 5 դափնեկիրների՝ Աարոն Չեխանովեր (Իսրայել), Ադա Յոնաթ (Իսրայել), Դան Շեխտման (Իսրայել), Ջոն Ռոբին Ուորեն (Ավստրալիա) և Էյիթի Նեգիսի (Ճապոնիա), ովքեր հագեցված ու բովանդակալից այս 3 օրերի ընթացքում կարդացին հանրային և մասնագիտական դասախոսություններ կենսաքիմիայի, քիմիայի, ֆիզիկայի և բժշկության, ինչպես նաև արդի աշխարհում գիտության գլոբալ խնդիրների վերաբերյալ:

Յուրերից Աարոն Չեխանովերը հանդես եկավ «Անհատականացված բժշկության հեղափոխություն. արդյո՞ք բուժելու ենք բոլոր հիվանդությունները և ի՞նչ գնով» հանրային և «Ուբիկվիտինի համակարգը ներբջջային պրոտեոլիզի համար. սկսած հիմնական մեխանիզմներից մինչև մարդու հիվանդություններ և դեղերի կուտակում նպատակային գոտիներում» մասնագիտական դասախոսություններով: Էյիթի Նեգիսիի բանախոսությունների թեման էր՝ «Իմ երազանքների իրականացումը կես դարում» (հանրային դասախոսություն) և «Անցողական մետաղի կատալիզը հանուն կայուն և բարգավաճ աշխարհի» (մասնագիտական դասախոսություն): Դան Շեխտմանը ներկաների դատին հանձնեց «Գիտական կրթության խթանումը» հանրային և «Քվազի-պարբերական բյուրեղներ. պարադիգմային տեղաշարժ բյուրեղագիտության մեջ» մասնագիտական դասախոսությունները: Ադա Յոնաթն իր հանրային և մասնագիտական դասախոսություններում արծարծեց «Տեսական գիտությունից դեպի ժամանակակից բժշկության զարգացումներ» և «Հակաբիոտիկների հատուկ տեսակները և մանրէային պահպանումը» թեմաները: Ջոն Ռոբին Ուորենն իր մասնագիտական դասախոսության ընթացքում խոսեց հելիկոբակտերի բացահայտման մասին:

Եռօրյա դասախոսությունների ընթացքում դահլիճները լեփ-լեցուն էին, ինչը, ըստ կազմակերպիչների, հերթական հաստատումն է այն փաստի, որ մեր երիտասարդությունը հասկանում է գիտության կարևորությունը, հետաքրքրվում դրանով, ասել կուզի՝ միջոցառումը հասել է իր նպատակին, այն է՝ ոգեշնչել մտավորական երիտասարդությանը, որ նրանք սկսեն ստեղծել: Մրցանակակիրները փաստում էին, որ հայ ուսանողները մեծ հետաքրքրությամբ են մասնակցել իրենց դասախոսություններին, տվել հետաքրքիր հարցեր:

Գիտության աշխարհում ամենահեղինակավոր մրցանակին արժանացած գիտնականներին ընդունել են Հայաստանի Հանրապետության նախագահն ու Ամենայն հայոց կաթողիկոսը: Մրցանակակիրները հանդիպել են նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ: Հանդիպումներ են եղել նաև հանրապետության ավագ դպրոցների աշակերտների հետ Դիլիջանի միջազգային դպրոցում, որն այդ օրերին հարթակ դարձավ երևանյան և մարզային դպրոցականների համար:

Յուրերն այցելել են Ծիծեռնակաբերդ: Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրում հարգանքի տուրք մատուցելուց հետո եղել են Հայոց ցեղասպանության թանգարանում, գրառումներ կատարել ՀՑԹԻ պատվավոր հյուրերի հուշամատյանում: Այցելել են նաև Նորավանք, Խոր Վիրապ, Գառնի, Գեղարդ, Գաֆեսջյան թանգարան, «Արարատ» կոնյակի գործարան: Նոբելյան մրցանակի դափնեկիրները հույս են հայտնել, որ Հայաստան այցելելու առիթ էլի կունենան, չի բացառվում ավելի լայն կազմով:

Այս միջոցառումը, որի կարգախոսն էր «Ոգեշնչվիր և ստեղծիր», առաջինն էր հայ իրականության մեջ: Այն աննախադեպ էր նրանով, որ 5 նոբելյան մրցանակակիրներ միաժամանակ եղան մեր երկրում: Միջոցառումը չսահմանափակվեց բժշկական բուհով, այլ ստացավ հանրային, հանարամատչելի արձագանք. փաստորեն եղավ համազգային գիտական զարթոնք:

Կազմակերպիչները ծրագրում են «Նոբելյան օրեր»-ը դարձնել ավանդական:

ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՋԻՆՎՈՐՆԵՐԸ...

Ամեն սերունդ ունի իր պատերազմը: XX դարավերջի և XXI դարի սկզբի այս պատերազմը մեր սերնդի պատերազմն է: Այդ պատերազմին մասնակցեցին տասնյակ հազարավոր հայորդիներ: Նրանցից շատերը երկրորդ անգամ վերադարձան ռազմադաշտ: Փոխգնդապետ Մարտին Բաղդասարյանն իր առաջին պատերազմը մղել էր 1990-1994 թվականներին: Նա ազգային զարթոնքի ջահակիրների շարքում է դեռևս 1960-ական թթ. կեսերից: Պահեստի փոխգնդապետը ներկայումս ռազմագիտություն է դասավանդում մայրաքաղաքի թիվ 94 դպրոցում: Այս տարվա ապրիլի 1-ից սկսված ռազմական գործողությունները նրան վերադարձրին ռազմադաշտ: Մենակ չէր, այլ իր նախկին զինակիցների՝ հռչակավոր Բեկի (Աղաբեկ Խաչատրյան), սիսիանցի կամավորական Կորյուն Կիրակոսյանի, խնձորեսկցի Մաքսիմ Մուրադյանի, արտաշատցի Կարեն Վիրաբյանի, էջմիածնեցի Հովհաննես Հովհաննիսյանի և էլի շատերի հետ վերադարձավ կռվի թեժ գոտի: Դիրքեր գրավեցին Մարտունու ուղղությամբ: Բեկը՝ գնդացրորդ, Մարտինը՝ հրաձիգ, գյումրեցի Ալբերտ Հարությունյանը՝ գնդացրորդ, մարտունեցի (ԼՂՀ) Գագիկ Գրիգորյանը՝ ականանետող, տաշիրցի Գևորգ Ազոյանը՝ դիպուկահար: Արցախյան նախորդ պատերազմի բովով անցած այս տղաներն ապրիլյան օրերին պահում էին «Մարտունի-3» պաշտպանական բնագծի թիվ 111 մարտական դիրքը: Ապրիլյան այս պատերազմն ավելի ծանր էր, քանզի հայի արյան ծարավ թշնամին շատ էր գազազած: Թշնամին մինչև օրս չի կարողանում մարսել անցած պատերազմում կրած դառնագույն պարտության հուշն ու մղձավանջը: Նա երբեք չի կարող քաղաքակրթվել և կանգնել «Մարդ» դառնալու ճանապարհի վրա: Այդպիսով, նման հարևան ունենալն արդեն ճակատագրի ծանր պատիժ է, և ամեն հայ երբեք չպետք է մոռանա այս ճշմարտությունը, թուլացնի զգոնությունը:

Կանգնելով տասնութամյա հայ զինվորի կողքին՝ փորձառու հայ ազատամարտիկն անհրաժեշտ փորձառությունն ու մարտական ոգին է փոխանցում նրան: Բեկն ու Մ.Բաղդասարյանը զենքի ու ճակատագրի ընկերներ են 1988 թվականից՝ ազգային զարթոնքի փոթորկոտ օրերից և միմյանցից անբաժան են մինչ օրս: Թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ ժամանակներում նրանք միշտ միասին են իրենց ձեռնարկումներում և մտածումներում:

Միասին էին նաև ապրիլի 1-ի տագնապալից գիշերը, երբ, զենք ստանալով, անմիջապես մեկնեցին ճակատ: Օրհասական այդ օրերին, գազազած թշնամու դեմհանդիման, նրանք դիրք ու սահման պահեցին կողք կողքի՝ ուս ուսի տված: Միշտ զենքի հետ, միշտ վտանգի մեջ՝ հանուն հայրենիքի անվտանգության: Մերօրյա հենց այս հերոսների օրինակով պետք է դաստիարակվեն մեր պատանիներն ու երիտասարդները:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Անի Ապրահամյան

Ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Անի Ապրահամյանը ծնվել է 1958 թ. օգոստոսի 15-ին Լիբանանում: Նրա հայրական և մայրական կողմից տատիկներն ու պապիկները գեհենի միջով ոտքով կտրել-անցել են Դեր-Զորի անապատը և ցեղասպանությունից մազապուրծ՝ հասել Բեյրութ: Նրանք երկար ժամանակ ապրել են գաղթականների ճամբարում, որտեղ էլ ծնվել ու մեծացել են Անիի ծնողները՝ Հասմիկ և Պետրոս Ապրահամյանները: Նրանք տարրական կրթություն են ստացել ֆրանսիացի միսիոներների դպրոցում: Ուսանելու ընթացքում սովորել են դերձակություն, որը դարձել է նրանց հիմնական զբաղմունքն ու աշխատանքը:

1969 թվականին, երբ ամերիկացիներն առաջին անգամ իջան Լուսնի վրա, Լիբանանում թերթերը ողողված էին Լուսնի վրա քայլող Արմսթրոնգի նկարներով: Այստեղից էլ սկսվել են Անիի հետաքրքրությունները երկնքի, աստղերի և ընդհանրապես գիտության նկատմամբ:

1970 թ. Անի Ապրահամյանի ողջ ընտանիքը մեկնում է ԱՄՆ (Մասաչուսեթսի նահանգ, Վուստեր քաղաք) մեծ ակնկալիքներով, որ իրենց հինգ զավակները հնարավորություն կունենան կրթություն ստանալու, ինչն իրենք չէին ունեցել: Վուստերում Անին սկսում է հաճախել օտարերկրացիների համար նախատեսված ամառային դպրոց: Այստեղ կարճ ժամանակահատվածում, հաշվի առնելով Անիի ընդհանուր զարգացածությունը, հատկապես հակումը մաթեմատիկական գիտելիքների նկատմամբ, ԱՄՆ-ում նրա առաջին ուսուցիչը՝ Քարփնտերը, որոշում է, որ Անին կարող է շարունակել իր դպրոցական կրթությունը 7-րդ դասարանից (6-րդի փոխարեն): Նա առաջին մարդն է եղել, որ օգնել է Անիին ճանապարհ հարթել ամերիկյան կրթության ոլորտում: Անի Ապրահամյանը, տիրապետելով հինգ լեզուների, նախ որոշում է դառնալ դիվանագետ, սակայն ավարտական դասարանում ուսուցիչների խորհրդով, ուշադրությունը բևեռում է բնագիտական առարկաներին: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Վուստերի Քլարք համալսարան, քիմիայի բաժին և ստանում կրթաթոշակ: Ուսանողական առաջին տարիներին Անին հետաքրքրվում է միջուկային ֆիզիկայով և մասնակցում պրոֆեսոր Բրեների խմբի հետազոտական աշխատանքներին: Սիրելով հետազոտական աշխատանքը և գիտական ուղղությունը՝ որոշում է դիմել ասպիրանտուրա: Ասպիրանտական տարիներին աշխատում է Նյու Յորքի Բրուքհեյեն ազգային լաբորատորիայում՝ դոկտոր Ռիչարդ Քաստենի ղեկավարությամբ, որտեղ ուսումնասիրում էին ^{235}U-ի ատոմի ճեղքումը: Բրուքհեյենում նա հանդիպում և աշխատում է միջուկային ֆիզիկայի ոլորտի աշխարհահռչակ գիտնականների հետ, այդ թվում նաև՝ Ռիկ Քաստենի և Դաեգ Բրեների: Մասնակցում է նաև դոկտոր Ռիչարդ Մեյերի փորձարարական աշխատանքներին՝ Լորենս Լիվերմոր ազգային Լաբորատորիայից և հետդոկտորական աշխատանքի առաջարկ ստանում Լիվերմորում: 1985 թվականի օգոստոսին, պաշտպանելով դոկտորական թեզը, մեկնում է Սան Ֆրանցիսկո՝ սկսելու հետդոկտորական աշխատանքը: Այստեղ, աշխատելով երեք տարի, մեծ փորձ և գիտելիքներ է ձեռք բերում, որոնք հետագայում կիրառում է Նոտր Դամի համալսարանի միջուկային ֆիզիկայի լաբորատորիայում աշխատելիս:

1988 թ. պրոֆեսոր Ումեշ Գարգի հրավերով Անի Ապրահամյանը զեկուցում է կարդում Նոտր Դամի համալսարանում և երկու շաբաթ անց ստանում միջուկային ֆիզիկայի լաբորատորիայում ասիստենտ պրոֆեսորի աշխատանքի առաջարկ: 1989-1994 թթ. նա դառնում է ասոցիացված պրոֆեսոր, իսկ 1999 թ. ստանում լրիվ պրոֆեսորի (full professor) պաշտոն: 2001 թվականից ընտրվել է Նոտր Դամի համալսարանի միջուկային ֆիզիկայի լաբորատորիայի տնօրեն, 2003 թվականից նա Նոտր Դամի համալսարանի ֆիզիկայի ամբիոնի վարիչն էր, իսկ 2006 թվականին Միացյալ Նահանգների ազգային գիտական հիմնադրամի միջուկային ֆիզիկայի և միջուկային աստղաֆիզիկայի հետազոտական ծրագրերի ղեկավարն էր: 2009 թ. ստացել է Ֆրանկ Մ. Ֆրեյման անվանական պրոֆեսորի պաշտոն:

Հաշվի առնելով Անի Ապրահամյանի գիտական, մանկավարժական, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2008 թվականին նրան ընտրել է ԳԱԱ արտասահմանյան անդամ:

2009 թ. Յուրի Հովհաննեսյանի հրավերով Անի Ապրահամյանն ընդգրկվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտի գիտխորհրդի աշխատանքներին՝ դառնալով նրանց անդամներից մեկը: Մասնակցել է Հայաստանում կազմակերպված միջուկային ֆիզիկային վերաբերող գիտաժողովների, գիտական նիստերի: Համագործակցում է ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատողների հետ: Անի Ապրահամյանը եղել է մի քանի ասպիրանտների գիտական ղեկավար: Նա շուրջ 200 գիտական աշխատանքների հեղինակ է:

Անին Միացյալ Նահանգների միջուկային ֆիզիկայի ոլորտում իր ուրույն տեղն ու դերն է ունեցել և այսօր էլ ունի. նա զբաղեցրել է հետևյալ պաշտոնները՝ co-chair of the US science academies decadal survey of nuclear science, co-chair of the Department of Energy's committee on Isotopes, a member of Nuclear Science Advisory Committee, and the elected chair of the American Physical Society's Division of Nuclear Physics: Նա Միացյալ Նահանգների ներկայացուցիչն էր տեսական և կիրառական ֆիզիկայի միջազգային միության միջուկային ֆիզիկայի բաժնում:

Անին երբեք չի մոռանում իր արմատների մասին, ինչն արտահայտվում է թե՛ հայ համայնքի հետ ակտիվ շփման, թե՛ իր գիտելիքները հայրենիքին ծառայեցնելու միջոցով: Նա նվիրված է իր ժողովրդին, երիտասարդությանը և գիտությանը:

Անի Ապրահամյանը ցայսօր մեծ ջանքեր է ներդնում և սերտորեն համագործակցում Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի և գիտակրթական այլ հաստատությունների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի գիտքարտուղար

Երևանում կայացավ «Հորիզոն–2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությանը նվիրված միջազգային աշխատաժողով

Վերջերս Մատենադարանի գիտաժողովների դահլիճում տեղի ունեցավ Եվրամիության հետազոտությունների և նորարարությունների «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցությանը նվիրված միջազգային աշխատաժողով և տեղեկատվական օր:

Միջոցառման նպատակն է ներկայացնել «Հորիզոն-2020» ծրագիրը և ասոցացման կարգավիճակից բխող մասնակցության լրացուցիչ հնարավորությունները, մասնավորապես փոքր և միջին ձեռնարկությունների աջակցության նոր գործիքները և համատեղ հետազոտական կենտրոնի դրամաշնորհները:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար դեսպան Պյոտր Սվիտալսկին, ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Գարեն Նազարյանը, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը, ՀՀ էկոնոմիկայի առաջին փոխնախարար Գարեգին Մելքոնյանը:

Միջոցառումը կազմակերպված էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ ԵՄ 7-րդ շրջանակային ծրագրի «Գիտության, տեխնոլոգիաների և նորարարության ոլորտում համագործակցության ցանց Արևելյան գործընկերության երկրների համար» (FP7 INCO NET EaP Project) նախագծի շրջանակներում, Հայաստանում ԵՄ պատվիրակության և Հայաստանի շահագրգիռ գերատեսչությունների սերտ համագործակցությամբ:

2016 թ. մայիսի 19-ին Բրյուսելում ստորագրվել է Եվրամիության հետազոտությունների և նորարարությունների «Հորիզոն-2020» ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության մասին համաձայնագիրը: Համաձայնագիրը ստորագրվել է ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի և Եվրոպական հանձնաժողովի հետազոտության, գիտության և նորարարության հանձնակատար Կառլոս Մոեդասի կողմից:

«Հորիզոն-2020» շրջանակային ծրագիրը նախատեսված է 2014-2020 թթ. համար: Ծրագրի ընդհանուր բյուջեն մոտ 80 միլիարդ եվրո է: Ծրագիրը համաեվրոպական համագործակցային գիտահետազոտական նախագծերի ֆինանսավորման հիմնական գործիք է: Ասոցացված երկրի կարգավիճակը Հայաստանի գիտահետազոտական ինստիտուտներին, համալսարաններին, փոքր ու միջին ձեռնարկություններին և անհատ գիտնականներին հնարավորություն կտա լիարժեքորեն օգտվելու ծրագրի բոլոր հնարավորություններից ԵՄ անդամ-պետությունների և ծրագրին ասոցացված մյուս 16 երկրների կազմակերպությունների համար նախատեսված պայմաններով:

«Հորիզոն-2020» ծրագիրը 2014-2020 թթ. տևողությամբ ԵՄ երկրորդ նշանակալից ծրագիրն է, որին միացել է Հայաստանը 2016 թվականին: Երկրորդ այդպիսի ծրագիրը փոքր և միջին ձեռնարկությունների մրցունակության COSME ծրագիրն է, որն ուղղված է նպաստելու նորարարությանը և գիտություն-արտադրություն կապի խթանմանը:

Ի լրումն «Հորիզոն-2020» և COSME ծրագրերի՝ Եվրամիությունը ՓՄՁ-ների զարգացման անմիջական ֆինանսավորում և տեխնիկական աջակցություն է իրականացնում «ԵՄ-ն Բիզնեսի համար» ծրագրի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն



ՔԻՉ ԵՆՔ, ԲԱՅՑ ՀԱՅ ԵՆՔ

Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:
Մենք մեզ ո՛չ ոքից չենք գերադասում:
Պարզապես մենք էլ պի՛տի ընդունենք,
Որ մե՛նք, միայն մե՜նք Արարատ ունենք,
Եվ որ այստեղ է՝ բարձրիկ Սևանում,
Երկինքը իր ճիշտ պատճենը հանում:
Պարզապես Դավիթն այստեղ է կռվել:
Պարզապես Նարեկն այստեղ է գրվել:
Պարզապես գիտենք ժայռից վանք կերտել,
Քարից շինել ծուկ, և թռչուն՝ կավից,
Ուսուցմա՛ն համար և աշակերտե՜լ
Գեղեցկի՛ն,
Բարո՛ւն,
Վսեմի՛ն,
Լավի՜ն...
Մենք քիչ ենք, սակայն մեզ հայ են ասում:

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում:
Պարզապես մեր բախտն ուրիշ է եղել,-
Պարզապես շատ ենք մենք արյուն հեղել.
Պարզապես մենք մեր դարավոր կյանքում,
Երբ եղել ենք շատ
Ու եղել կանգուն,
Դարձյա՛լ չենք ճնշել մեկ ուրիշ ազգի,
Ո՛չ ոք չի տուժել զարկից մեր բազկի:
Եթե գերել ենք՝
Լոկ մեր գրքերով.
Եթե տիրել ենք՝
Լոկ մեր ձիրքերով...
Պարզապես մահն էր մեզ սիրահարվել,
Իսկ մենք ինքնակամ նրան չենք տրվել:
Ու երբ ճարահատ մեր հողն ենք թողել՝
Ո՜ւր էլ որ հասել, որտեղ էլ եղել,
Ձանացել ենք մենք ամենքի՛ համար.
Շինել ենք կամուրջ,
Կապել ենք կամար,
Ամե՜ն տեղ հերկել,
Հասցրել բերքեր,
Ամենքի՜ն տվել մի՛տք, առա՛ծ, երգե՛ր՝
Պաշտպանել նրանց հոգևոր ցրտից,-
Ամե՜ն տեղ թողել մեր աչքից ցոլանք,
Մեր հոգուց՝ մասունք,
Եվ նշխար՝ սրտից...

Մենք քիչ ենք, այո՛, բայց կոչվում ենք հայ-
Գիտենք դեռ չանցած վերքերից տնքալ,
Բայց նոր խնդությամբ ցնծալ ու հրճվել.
Գիտենք թշնամու կողը մխրճվել
Ու բարեկամին դառնալ աջակից.
Դուրս գալ մեզ արված բարության տակից,
Մեկի փոխարեն տասն հատուցելով...
Հօգուտ արդարի և արեգակի
Գիտենք քվեարկել մեր կյանքով նաև...
Բայց թե կամենան մեզ բռնի վառել՝
Մենք գիտենք մխա՛լ - և կրա՜կ մարել.
Իսկ եթե պետք է խավարը ցրել՝
Գիտենք մոխրանալ որպես վառ կերոն.
Եվ գիտենք նաև մեզ կրքոտ սիրել,
Բայց ուրիշներին մի՜շտ էլ հարգելով...

Մենք մեզ ոչ մեկից չենք գերադասում,
Բայց մեզ էլ գիտենք -
Մեզ հա՜յ են ասում:
Եվ ինչո՞ւ պիտի չհպարտանանք...
Կա՛նք:
Պիտի լինե՛նք:
Ու դեռ - շատանա՜նք:

Մուշեղ ԳԱԼՇՈՅԱՆ

ԲՐԱԲԻՈՆ ԾԱՂԻԿ ՈՐՈՆՈՂՆԵՐԸ

...Թելո Մեսրոպն ու հարևան գյուղացին վեճի մեջ են՝ որքա՞ն է միլիոնը: Վիճում են ու գնում ս. Ախբերիկ պարզելու, թե որքան է միլիոնը՝ հարյո՞ւր հազար, թե՞ հազար հազար: Հենց այդքան հայ զինվոր է հարկավոր՝ հայոց լեռները մաքրելու չարքերից... Բայց, ուզում եք հավատացեք, ուզում եք՝ ոչ. մի տղա, մեն-մենակ մի ջահել՝ Կարմիր իրիցու տնից, անունն Արաբո, ձին հեծած կանգնել է Ծիրնկատարին, սուլթան Համիդին կռիվ է հայտարարել:

Հայ ֆիդայական շարժման սկիզբը այսպես հեքիաթային, բայց պատմականորեն ճիշտ, մեզ ներկայացնելով, Խաչիկ Դաշտենցը հարց է տալիս՝ որքա՞ն ժամանակ է անցել, ահա, քսաներորդ դարի մուտքն է, բայց Դավթից մինչև Արաբոն ծիածանի կամարի տակ լեռների ու նրանց մարդկանց ճակատագրում ի՞նչն է փոխվել, կայծակնահար նույն լեռներն են, չարքերով լցված նույն վիհերը, իր մենակությանը խաչված նույն ժողովուրդը և ըմբոստ ճակատով նույն միայնակ զինվորը՝ անունը Դավիթ թե Արաբո:

...Մոսե Իմոն հասել է մինչև Ինգլիզ և քրիստոնյա թագավորից, ի տեղ օգնության, մի օրորոց է ստացել նվեր: Այդ լեռների պատվիրակը աշխարհի հզորներից հզոր ո՞ր թագավորի դուռն էլ գնար, այդ օրորոցը կստանար՝ օրորիր հույսդ:

Հույսը դարձյալ հրաշքն է: Պայթող աղբյուրի ակունքից հայտնվող Քուռկիկ Ջալալին, երկրի ընդերքից հայտնվող հրեղեն ձին:

Այդ հրեղեն ձին Արաբոն էր:

Այդ հրեղեն ձին Աղբյուր Սերոբն էր, Սպադաց Մակարն էր, Գևորգ Չաուշը, Անդրանիկը, Դժոխք Հրայրը, Սմբատը, Գալեն, Չոլոն, Մորուք Կարոն, Արծիվ Պետոն, Սևքարեցի Սաքոն, Կայծակ Անդրիասը, Տեր Քաջի Ադամը, Կոտո Հակոբը, Լաճկանցի Արթենը, Առղա Զորիկը, Ալադին Միսակը, Բրինդարը, Սեյդո Պողոսը, Արտոնքա Զնդոն, Մուքոն, Բամբակու Մելոն, այդ հրեղեն ձին Շենիքցի Մանուկն էր, Փեթարա Մանուկը, Փեթարա Թադեն, Փեթարա Ախոն, Փեթարա Իսրոն...

Պայթող Աղբյուրի հրաշքը հայ ֆիդայիներն էին:

Հրեղեն շնչով այրեր, հայրենիքի մատաղացու որդիներ, որ ապրեցին միայն հայրենիքի կյանքով և դեռ իրենց կենդանության ժամանակ դարձան պատմություն:

...Անօրենները դժոխք էին դարձրել այն երկիրը, ուր գործում էին հայ ֆիդայիները: Եվ նրանք կամոք էին հագել դժոխքի բոցերից կարված կրակե շապիկները: Հայրենիքի որդու առաքելությունն էր դա: Ինչպե՞ս կարող է լինել հանգիստ և անձնական ապահով կյանք, երբ հայրենիքն ինքն է անապահով, որտեղի՞ց պետք է հայտնվի անձնական երջանկությունը, երբ հայրենիքն ինքն է ապերջանիկ, ո՞ւր կտանի անձնական փառքի ձգտումը, երբ հայրենիքն ինքն է անփառունակ, ո՞րն է անձնական սերը, երբ սիրո օրորոց հայրենիքը դժոխքի վերակացուն է օրորում:

Քարանձավն էր նրանց տունը, ամենաշատը, ամենաշատը՝ գյուղեզրի մարագը կամ գոմը: Խոտը կամ ձյունն է նրանց անկողինը, փոթորիկն է նրանց սպիտակեղենը, քարն է նրանց բարձը, սեփական շունչն է նրանց կրակը: Ձենքի հետ պսակված, ուսապարկերում մի կտոր կորեկհաց կամ մի բուռ փոխինձ, ուսապարկերում իրենց պատանքացուն, հպարտ ճակատները թշնամու նենգ գնդակի դեմ բաց, զօր ու գիշեր լեռներում քայլում են կրակե շապիկ հագած աստվածները:

Արարչություն է անանձնական կյանքը: Այդպիսի կյանքով կարող է ապրել միայն նա, ով իր ազատությունը չի զատում հայրենիքի ազատությունից, ով իր փառքը չի բաժանում հայրենիքի փառքից, ով իր երջանկությունը չի բաժանում հայրենիքի երջանկությունից, ով իր սերը չի զատում հայրենիքի սիրուց... Ասպետություն, ազատություն, հերոսություն, փառք և երջանկություն է անանձնական կյանքը: Եվ անսահման է անանձնական կյանքի սահմանը:

Կարմիր իրիցու տան երբեմնի ավետարանում գրված է եղել, թե Ավետյաց երկրի լեռներում մի ծաղիկ է աճում՝ երջանկության Բրաբիոն ծաղիկը: Շատերն են ելել երջանկության ծաղիկը որոնելու, էն գլխեն որոնել են, բայց ոչ մեկը չի գտել: Եվ երջանկության ծաղկի հետևից գնացողը այլևս համարվում էր ցնորքով տարված, խենթ:

Այդ «խենթը» Կարմիր իրիցու տան Արաբոն էր:

Հայոց լեռների երջանկության ծաղիկ որոնող «խենթերը» ֆիդայիներն էին:

Մի տղա, միայնակ ու ասպետ մի զինվոր՝ արյունարբու ու նենգ մի բանակի դեմ: Յոթ զինվոր՝ յոթ բանակի դեմ: Ամենաշատը քառասուն զինվոր՝ քառասուն հազարանոց արյունարբու ու նենգ բանակի դեմ («Քառասուն» թիվը հեքիաթային է, իսկ պատմությունը՝ իրական): Միայնակ զինվորը գիտեր, որ մի բանակի հաղթել չի կարող: Քառասունը գիտեին, որ հաղթանակը քառասուն գազ խորը՝ քառասուն ջրաղացքարի տակ է, սակայն... որոնում էին իրենց լեռների Բրաբիոն ծաղիկը: Կհաղթես, թե կպարտվես՝ չարի դեմ չարանալը առաքելություն է, կգտնես, թե ոչ՝ հայրենիքի երջանկության ծաղիկը որոնելը հայրենիքի որդու պարտքն է:

Ուխտին հավատարիմ՝ զենքին պսակված, նրանցից շատերը փաթաթվեցին իրենց պատանքացու կտավներով և, որպես Բրաբիոն ծաղկի հունդեր, թաղվեցին սարերում: Ով մնաց՝ տեսավ հայ գողգոթան: Եվ տեղահանվող, լլկվող, մորթվող ու այրվող ժողովրդի համար դարձավ պաշտպան բանակի խորհրդանիշ և բանակ, առաջնորդի խորհրդանիշ և առաջնորդ, կամքի խորհրդանիշ և կամք, հույսի խորհրդանիշ և հույս...

ԵՌԱԲԼՈՒՐ. ՆՈՐՕՐՅԱ ՍՐԲԱՎԱՅՐ



Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր
մեռանիցի, ինքն միայն կայ,
ապա եթէ մեռանիցի, բազում արդիւնս առնէ:

Աւետարան ըստ Յովհաննու, գլուխ ԺԲ, 24-25

Դարերի խորքից եկող անքննելի ճշմարտություն է՝ հայրենիքը սրբություն է, հայրենիքի պաշտպանությունն ու ազատագրումը՝ սուրբ գործ: Ցավոք, այս սուրբ գործը զոհեր է պահանջում, որոնց հիշատակը վառ պահելու և մյուս հանգուցյալներից առանձնացնելու համար ժողովուրդներն առանձին հանգստարաններ են ստեղծել: Մեզ՝ հայերիս համար այդպիսի նվիրական վայր է «Եռաբլուր» պանթեոնը:

Արցախյան ազատամարտի մասնակից, պատմական գիտությունների թեկնածու Անդրանիկ Արշակյանը, ով Արցախյան ազատամարտին նվիրված գրքերի, տասնյակ գիտական հոդվածների, արցախյան հիմնահարցին առնչվող բազմաթիվ հրապարակումների հեղինակ է, վկայում է, որ հայ-ադրբեջանական բախումների մեր առաջին զոհերը՝ մոտ մեկ տասնյակ, հողին հանձնվեցին Նորքի առաջին զանգվածում գտնվող պուրակում: Մովսես Գորգիսյանի, Սամվել Գևորգյանի, էդուարդ Մարկոսյանի, Մուշեղ Մխոյանի, Երվանդ Սաղումյանի աճյուններն ամփոփվեցին մեր ժողովրդի համար սրբատեղի դարձած մեկ այլ վայրում՝ Ծիծեռնակաբերդում: Բազմաթիվ զոհվածներ թաղվեցին ընտանեկան գերեզմանատներում. առաջացավ հայրենիքի համար նահատակվածների գերեզմանները մեկտեղելու խնդիրը. վայրի ընտրության հարցի շուրջ տարբեր կարծիքներ կային:

Առաջին մեծ խումբը, որ իր վերջին հանգիստը գտավ Եռաբլուրում, 1990 թ. մայիսի 27-ին Երևանի կայարանամերձ հրապարակում խորհրդային զորքերի հետ բախման ժամանակ զոհված շուրջ երկու տասնյակ տղաներն էին: Այսպես ստեղծվեց հայոց նորագույն հաղթանակը կերտած քաջերի եղբայրական պանթեոնը. անցյալ դարի 90-ականների առաջին կեսից մեր բառապաշարում ավելացավ նոր բառ-տեղանուն՝ «Եռաբլուր» պանթեոն: Պանթեոնի տնօրեն, Արցախյան ազատագրական պատերազմի մասնակից, գնդապետ Սուրեն Խաչատրյանի դիպուկ բնորոշմամբ. «Հայոց մեծ եղեռնի հուշահամալիրի՝ Ծիծեռնակաբերդի հարևանությամբ երեք բլուրների լանջերին հուղարկավորվեցին առաջին նվիրյալները, և տեղանքը սրբացավ, կոչվեց Ազատամարտի հերոս նահատակների Եռաբլուր-Պանթեոն»:

Եռաբլուրը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայության հուշահամալիր է՝ պանթեոն, որտեղ ամփոփված են Արցախյան պատերազմում և զինադադարից հետո զոհված կամ մահացած ազատամարտիկների և զինծառայողների աճյունները: Գերեզմանատան կարգավիճակը հաստատվել է ՀՀ կառավարության 1992 թ. մայիսի 26-ի որոշմամբ:

Ուխտատեղի դարձած հուշահամալիրը գտնվում է հայոց 12-րդ մայրաքաղաք Երևանի արևմտյան մասում՝ թուրքական գերության մեջ մնացած Մալաթիա և Սեբաստիա քաղաքների անունները կրող համայնքում՝ Երևան-Վաղարշապատ ավտոմայրուղուց աջ՝ Եռաբլուր բարձունքում (բարձրությունը՝ 951 մ), տարածքը՝ 19, 22 հեկտար:

Ներկայումս Եռաբլուրում ամփոփված են իրենց կյանքը մեր հայրենիքին նվիրաբերած 786, այդ թվում՝ այլազգի (ռուս, եզդի, ուկրաինացի, թաթար, թուրքմեն և այլն) ազատամարտիկների աճյուններ:

Եռաբլուրում իրենց վերջին հանգիստն են գտել Անդրանիկ Օգանյանը, Սոսե մայրիկը, Մոնթե Մելքոնյանը (Հայաստանի ազգային հերոս), Վազգեն Սարգսյանը (Հայաստանի ազգային հերոս):

Պանթեոնում հավերժական քնով քնած են մեր նշանավոր ազատամարտիկներից Ջիվան Աբրահամյանը (Հայաստանի ազգային հերոս), Վարդան Ստեփանյանը (Դուշման), Շահեն Մեղրյանը, Վահան Ջատիկյանը, Սմբատ Այվազյանը և ուրիշներ. բոլորին թվել հնարավոր չէ, բոլորն էլ հավերժի ճամփորդ են:

Գերեզմանատան տեղանքն անհարթ է: Ա. Արշակյանի խոսքով տեղանքն այդպես է թողնվել մտածված՝ տղաների՝ լեռներում զոհվելու խորհուրդն արտահայտելու համար: Նշենք մի կարևոր հանգամանք. ի սկզբանե որոշվեց զոհվածների կուսակցական պատկանելությունը չնշել: Որոշվեց նաև շիրմաքարերի տեսակը, տեսքն ու ձևը. բոլոր շիրմաքարերը պետք է լինեն բազալտե:

Գերեզմանատան կարգավիճակը հաստատելուց հետո դրվեց պանթեոնին ճարտարապետական լուծումներ տալու խնդիրը. հատակագծի և ճարտարապետական լուծումների հեղինակներն Ասլան Մխիթարյանն ու իր արվեստանոցի ճարտարապետներն են:

Հայոց հերոսների հանգստարան տանող ճանապարհը սկսվում է հաղթական կամարով՝ կառուցված 1997 թ.՝ ճարտարապետ Ասլան Մխիթարյանի նախագծով: Հաղթակամարի մասն են կազմում հավերժության խորհրդանիշը, բերքի տակ կքած նռնենու ճյուղերը, երեք մեծ խաչերն ու երեք աղբյուրները, որոնք խորհրդանշում են մեր ժողովրդի ստեղծագործ ոգին, կենսունակությունն ու հավատը: Հուշարձանի սպիտակ գույնը խորհրդանշում է մեր զոհված մարտիկների երիտասարդությունն ու նրանց գործի հավերժությունը: Հաղթակամարին փորագրված դափնու տերևները նրանց փառքի ու անմահության խորհուրդն ունեն:

Հուշահամալիրի ճարտարապետական հորինվածքի մեջ են մտնում մուտքի սյուները: Դրանք կառուցվել են 1995 թ., ճարտարապետը դարձյալ Ասլան Մխիթարյանն է: Մուտքի աջ կողմի սյան վրա V դարի պատմիչ Եղիշեի խոսքերն են. «Մահ իմացյալ անմահություն է», իսկ ձախ կողմի սյան վրա՝ մեկ այլ մեծ հայի՝ Գարեգին Նժդեհի խոսքերը. «Ննջեք ուրեմն սուրբ շիրիմների տակ, քանզի արթուն եք մեր ոգիներում»:

Մուտքի աջ մասում թանգարանի շենքն է, որի շինարարությունն ընթացքի մեջ է:

Եռաբլուրի նման վայրը չէր կարող լինել առանց հոգևոր ներկայության. հերոսների ննջավայրում՝ մուտքի սյուների հարևանությամբ, հայոց կապույտ երկինք է խոյանում Սուրբ Վարդանանց եկեղեցին: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1994 թ., օծումը՝ 1999 թ. սեպտեմբերին: Կառուցվել է ամերիկահայ բարերար ամուսիններ Հրաչ և Վիկտորյա Ոսկանյանների կողմից: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ եկեղեցին ունի չկրակված փամփուշտի կամ դեպի երկինք ուղղված հրթիռի տեսք, որն իր հետ տիեզերք է տանում Եռաբլուր պանթեոնում ննջող մեր հերոս-նահատակների երազներն ու պատգամները: Մեկ այլ կարծիքի համաձայն՝ եկեղեցու գմբեթի ճարտարապետական հորինվածքը թրի խորհուրդն ունի: Սուրբ Վարդանանց եկեղեցում կատարվում են Հայ առաքելական եկեղեցու բոլոր արարողությունները:

Եկեղեցու մոտ է գտնվում «Բերդպար» հուշարձանը՝ կառուցված 1999 թ.: Խորհրդանշում է Վազգեն Սարգսյանի հետևյալ խոսքերը. «21-րդ դարը մերն է լինելու»: Ուս ուսի տեղադրված են 21 բազալտե սալաքարեր: Առջևի հրապարակում վեր խոյացող սյան վրա հայոց զինված ուժերի զինանշանն է:

Ազգային գերեզմանատան տարածքում՝ մուտքի մոտ կառուցվող թանգարանի շենքի հարևանությամբ է գտնվում «ԱՍԱԼԱ» (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) հուշահամալիրը: Կառուցվել է 2000 թ. «Նեմեսիս» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից: Տուֆակերտ կառույցի վերին մասում քանդակված է զանգ: Դեպի այդ զանգը փորագրված ինքնաձիգները Հայ դատն արթուն պահելու խորհուրդն ունեն: Ներքևի մասում ծովից ծով Հայաստանի քարտեզն է, որը նաև ԱՍԱԼԱ կազմակերպության զինանշանն է: Հուշարձանի առջև տեղադրված են 39 մարտիկների տապանաքարերը:

Պանթեոնում հառնող հուշարձաններից է Անհայտ կորած ազատամարտիկների հուշարձանը, որ կառուցվել է 2003 թ.՝ խաչքարի տեսքով՝ ԱՍԱԼԱ-ի հուշահամալիրից մի քանի քայլ հեռու: Խաչերից մեկի թևին քանդակված են Նոյի աղավնին և հայոց եռագույնը, ներքևում գրված է. «Անունդ անհայտ, սխրանքդ անմահ»:

Այս հուշարձանին կից 2004 թ. կանգնեցվել է զինադադարի ժամանակ զոհված զինվորների հուշաքարը, որի վրա պատկերված դափնու տերևները խորհրդանշում են ծաղկուն, երիտասարդ կյանքի հավերժությունը:

Եռաբլուրի եղբայրական գերեզմանոցում է տեղադրված Արծվաշենում զոհվածների հուշարձանը. կառուցվել է 1994 թ.: Չորս մետր բարձրությամբ հուշարձանի վրա գրված է. «Արծվաշենում զոհված 12 հայորդիների հիշատակին», իսկ տապանաքարի վրա նահատակ զինծառայողների անուններն են:

Համալիրը պահպանում և հսկում է գերեզմանատան զինվորական պահակային ծառայությունը, որը մեծ հոգածությամբ է վերաբերվում յուրաքանչյուր շիրմաքարի, հուշարձանի, ծառի ու թփի:

Պանթեոնի տնօրեն գնդապետ Սուրեն Խաչատրյանի և մի խումբ նվիրյալների կողմից հրատարակվել է «Եռաբլուր» գիրքը՝ երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն: 2014 թ. այն վերահրատարակվեց Սիդնեյում՝ քաղաքի հայ համայնքի կողմից՝ տեղի հայկական եկեղեցու միջնորդությամբ:

1995-ից գործում է «Եռաբլուր» զինվորական պանթեոնի զոհված ազատամարտիկների և զինվորների ծնողների» կոմիտեն: Մենք պետք է գլուխ խոնարհենք այդ ծնողների առաջ, որ ազգին այդպիսի զավակներ են պարգևել:

Անդրանիկ Արշակյանը հիշում է, որ պանթեոնի հարդարման, ձևավորման աշխատանքները՝ ծառատունկ, կանաչապատում և այլն, սկզբնական շրջանում, չնայած տեխնիկայի առկայությանը, իրենք՝ ազատամարտիկները, կատարում էին ձեռքով՝ ի նշան խոնարհումի զոհված ընկերների հիշատակի առջև: «Երանի նրանց, ովքեր ճանաչել, հաղորդակցվել կամ շփվել են մեր անմահացած Տղերքի հետ, ու նաև նրանց երանի, ովքեր չեն ճանաչել, չեն շփվել և այդպես ծանր չեն տանում կորստի ցավը,- գրում է Ա. Արշակյանը իր հեղինակած «Մահ չիմացյալ՝ մահ, մահ իմացյալ՝ անմահություն» գրքում:- Նրանցից յուրաքանչյուրի կորստի հետ մենք աղքատացել ենք ու կողոպտվել, փոխարենը այդքան հարստացրել հողը, ուր ամփոփել ենք նրանց»:

«Կանցնեն տարիներ...,- ասում է գնդապետ Խաչատրյանը,- «Եռաբլուր» պանթեոնում ամեն մի հերոս կունենա իր ծառը, իր ապրող հիշողությունը, և այդ ծառերի միասնական անտառը կնմանվի դար ու դարեր առաջ Մասիսի փեշերին սոսափող Սոսյաց անտառին: Եվ ժողովրդի կողմից սրբացված Սոսյաց անտառի սոսափն ու ձայնը նորից կլսենք, կունկնդրենք դյուցազուն-հերոսներին զով անող մեր նոր՝ Եռաբլուրի լանջերին սրբացած անտառում»:

Այսօր Հայաստանի Հանրապետության պետական տոները, միջոցառումները հիմնականում սկսվում են Եռաբլուր այցելությունից: Երկրի աշխարհիկ ու հոգևոր ղեկավարները ծաղիկներ ու ծաղկեպսակներ են դնում Զորավար Անդրանիկի, Վազգեն Սարգսյանի շիրիմներին, «Բերդպար» հուշաքարին:

Պանթեոն են այցելում նաև պատանիներ ու երիտասարդներ. 2015 թ. Եռաբլուր են այցելել մոտ 11700 դպրոցական, 5471 ուսանող, «Արի տուն» ծրագրի շրջանակներում՝ 1385 սփյուռքահայ երիտասարդ: Այցելում են նաև բազմաթիվ օտարերկրացի հյուրեր: Եռաբլուրում են կազմակերպվում կամ Եռաբլուրից են սկիզբ առնում տարատեսակ միջոցառումներ, ինչպես օրինակ՝ զինվորական մարաթոնյան վազքը:

Հակասական զգացումներ ես ապրում այս սուրբ հողակտորը ոտք դնելիս՝ ցավ, զայրույթ, ափսոսանք, հավատ, վճռականություն, հպարտություն... Յուրաքանչյուր հայ կյանքում գոնե մեկ անգամ պարտավոր է լինել այս նվիրական վայրում: Եռաբլուրը սոսկ պանթեոն չէ: Սա մի սուրբ տարածք է, որտեղ հոգեպես մաքրագործվում ես, ավելի հայրենասեր դառնում. պետք է դառնաս, պարտավոր ես դառնալ: Այստեղ հասկանում ես՝ ով ես դու:

Եռաբլուրի լռությունը մեծ խորհուրդ ունի: Այստեղ ժամանակը մի պահ կանգ է առնում: Կարծես քեզնից անկախ անծայն, անբարբառ երկխոսություն ես սկսում, զրույցի ես բռնվում հանգչող հերոսների հետ:

Թող երկնային լույս իջնի ՆՐԱՆՑ սուրբ շիրիմներին, ՆՐԱՆՑ, որ իրենց ջահել գլուխները դրեցին զոհաքարին, որ չթողեցին Հայոց աշխարհի չքնաղ անկյուններից մեկը թուրքանոց դառնա, որ Արարատ լեռան գագաթի պես բարձր պահեցին ազգի պատիվը: ՆՐԱՆՑ, որոնց շնորհիվ բարոյական հաղթանակներից հոգնած հայ ժողովուրդը հարյուրամյակներ անց հող ազատագրելու բերկրանքը վայելեց:

ՆՐԱՆՑ հոգիները գնացին-միացան Քաջ Վարդանի ու Վարդանանց դյուցազունների, Դավիթ Բեկի ու իր հերոսների, անձնազոհ հայդուկների, Զեյթունում, Սասունում, Մուսա լեռում, Վանում, Սարդարապատում, Բաշ Ապարանում, Ղարաքիլիսայում, Զանգեզուրում ընկած անվախ հայորդիների և, առհասարակ, մեր անշղթա լինելիության ու հող հայրենիի պաշտպանության համար անզիջում կռիվ տված ու նահատակի լուսապսակով անմահացած նախնյաց հոգիներին:

Մենք ՆՐԱՆՑ հիշելու ենք միշտ, քանի կանք: Իսկ ՆՐԱՆՑ սուրբ հիշատակը հարգելու լավագույն միջոցը մեր սրբություն սրբոց հայրենիքը շենացնելն ու հզորացնելն է: Եվ միայն այդժամ վստահ կարող ենք ասել, որ ՆՐԱՆՔ երկնի արքայությունից նայում են մեզ, և անսահման խինդով ու բերկրանքով են լցվում ՆՐԱՆՑ հոգիները:

Հավե՛րժ խոնարհում ՆՐԱՆՑ սուրբ հիշատակի առաջ, հավե՛րժ խոնարհում, հավե՛րժ...

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ակնարկի պատրաստմանն անհրաժեշտ նյութեր տրամադրելու համար հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում Արցախյան ազատամարտի մասնակից, պատմական գիտությունների թեկնածու Անդրանիկ Արշակյանին, «Հայկական հանրագիտարան» հրատարակչության գիտական խմբագիր Հենրիկ Խաչատրյանին, «Եռաբլուր» պանթեոնի տնօրեն, Արցախյան ազատամարտի մասնակից գնդապետ Սուրեն Խաչատրյանին:

Վիրաբույժ-գիտնականի և քաղաքացու դիմանկարը

(ՀԱՅԱԾՔ ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻՑ)

Խոսելով 70-ամյակի շեմին մոտեցող բազմավաստակ բժշկի՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սասուն Խաչատուրի Գրիգորյանի մասին՝ գործընկերները և հիվանդներն առանձնացնում են նրա բարությունը, ճշմարտասիրությունը, հիվանդագին վիճակների մեջ խորամուխ լինելու, դրանց ախտորոշումները հստակ ձևակերպելու, իսկ այնուհետև հիվանդին հասկանալի եղանակով պարզաբանելու ունակությունը, որը բնավ արտաքին կեցվածք չէ, այլ հայոց Սասուն աշխարհից ժառանգած պապական բնույթ ու բնավորություն: Հարցված հիվանդների և գործընկերների մեծամասնությունը Ս. Գրիգորյանի մեջ առանձնացնում են նրա մասնագիտական խորը գիտելիքները, փորձառությունը և ազնվությունը: Հարցվածների միահամուռ կարծիքով Ս.Գրիգորյանը «ունի թեթև ձեռք, վիրահատությունը կատարում է ոչ միայն վարպետորեն, այլև յուրօրինակ վայելչագեղությամբ»: Ս. Գրիգորյանի խոստովանությամբ՝ «վիրաբույժի մտքի աշխատանքը պետք է նախորդի ձեռքերի աշխատանքին»:

Հարցվածների նշանակալի մասն առանձնահատուկ նշում է անվանի վիրաբույժի խոսքի կուլտուրան՝ խոսքի տոնայնության փոփոխությունը կախված զրուցակցից: Ս. Գրիգորյանի խոսքի ինտոնացիան բացահայտում է հայոց լեզվի խորքային, բուժիչ հնչողությունը: Ամեն մի երիտասարդ բժիշկ, որ ամոքիչ բառերով դիմում է հիվանդին, պետք է հիշի մեծ Ստանիսլավսկու խոսքերը՝ «հնչյունները, որոնցից գոյանում է յուրաքանչյուր բառը, ունեն իրենց հոգին, բովանդակությունը, և դրանք արտաբերողը դա պետք է զգա»: Սասուն Գրիգորյանը հենց այն բժիշկն է, որ գիտե, թե ինչպիսի բառերով պետք է դիմի հիվանդին յուրաքանչյուր պահի և ինչպես: Ինչպես աստվածախոհ քահանա՝ նա միշտ ինչ-որ ամոքիչ բառեր է ասում հիվանդի մահճակալի մոտ: Խորագիտակ հայ բժշկի խոսքը զերծ է կեղծ պաթոսից, վերամբարձ, ճոռոմ ճարտարախոսությունից, հիվանդի բնազդական վախը շահարկելու միտումից: Ինքը՝ մեծանուն բժիշկը, ասում է, որ ամոքիչ յուրաքանչյուր խոսք առնվազը կես ժամով երկարացնում է և՛ նրանց կյանքը, ովքեր դա ասում են, և՛ նրանց, ում ուղղված է բուժիչ խոսքը: Նա իր բժշկական պրակտիկայով, իր բժշկարար խոսքով կարծես հաստատում է աստվածաշնչյան ճշմարտությունը, թե՝ «բուժող լեզուն կենաց ծառ է» (Առակաց ԺԵ:4):

Հարցվածներին զարմացնում են բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Գրիգորյանի մասնագիտական խոսքի հոգևորությունն ու թեթևությունը: Նույնիսկ հիվանդի համար ծանր ու դժվարին պահերին՝ հավասարակշռությունը, վարմունքի և գնահատականի տակտը պահպանելու արտասովոր ունակությունը: Նրա բնավորության մեջ իսպառ բացակայում են չարության և կոշտության շեշտերը, ինչն ինքնին մեծապես նպաստում է հիվանդի վերականգնմանը՝ հետվիրահատական շրջանում:

Հիացմունքով նայելով վիրաբույժի «խոսուն» ձեռքերին՝ ակամայից հիշում ես ֆրանսիացի մեծ գրող Անդրե Մորուայի բառերը. «Մարդկանց բուժելը արհեստ չէ, այլ ծանր խաչ»: Անտարակույս, վիրաբույժի աշխատանքը ենթադրում է անհավանական ծանրաբեռնվածություն, սթրեսային վիճակներ: Ծանոթ վիրաբույժներից մեկը նկատել է. «Չնայած վիթխարի ֆիզիկական և բարոյական հոգնածությանը, ես մտածում էի հետվիրահատական ընթացքի հնարավոր բարդացումների մասին: Մտածում էի, որ Աստված մի արասցե, եթե առաջանան չծրագրված ինչ-որ բարդացումներ՝ կիսակատար, թերավարտ գործողությունների պատճառով...»: Վիրահատության ժամանակ վիրաբույժները շնչում են վնասակար նարկոզային գոլորշիներ, ուժաթափվում են լուսարձակներով հարուցված սաստիկ շոգից: Իզուր չէ, որ վիրաբույժի աշխատանքը՝ օրգանիզմի մաշվածության և վտանգավորության առումով, հավասարվում է ռեակտիվ ավիացիայի օդաչուի մասնագիտությանը: Բարդ, բազմաժամ վիրահատության ժամանակ վիրաբույժը կորցնում է իր քաշից մինչև 1 կգ, իսկ դա, մասնագետների վկայությամբ, ավելին է, քան թե ձուլարանի թեժ արտադրամասի բանվորի կորուստը աշխատանքային ողջ օրվա ընթացքում: Հարցվածների գրեթե կեսը (46 տոկոսը) համաձայն է հետևյալ ձևակերպման հետ. «Հարկ է ընդունել, որ վիրաբույժի մասնագիտությունը «վտանգա-վոր» մասնագիտություն է, քանի որ մասնագիտական գործունեության այլ ոլորտների համեմատությամբ այստեղ կորուստների թիվն անհամեմատ ավելի մեծ է»:

«Ժամանակն իր շավղից դուրս է սայթաքել» համլետյան խոսքերն այսօր դարձել են բժիշկ-հասարակություն հարաբերությունների խաթարման խորհրդանիշը: Ս. Գրիգորյանի՝ ազնվագույն բժշկի և Հայի մտածումների և ոգորումների առանցքում են հայ բժշկի մասնագիտական արժանապատվությունը, ազնվությունը և գթասիրությունը, ինչով ոչ հեռու անցյալում հպարտանում էինք հայերս: Ցավոք, այսօր դրանք կարծես թե նետվում են հասարակական հետնախորշ, որպես «չաշխատող, անօգուտ բեռ»: Դրանց փոխարինելու են գալիս ամենակուլ օգտապաշտությունը, բժշկական և ցանկացած այլ հանրույթում ամեն գնով ինքնահաստատվելու անհագուրդ մարմաջը: Ինչպես ցույց են տալիս հարցումները, Հայաստանի շարքային քաղաքացիներն արտահայտում են իրենց խոր անհանգստությունը և դժգոհությունը դեղամիջոցների գների անհարկի աճի և դեղերի իսկականության վերաբերյալ:

Բնակչության մեծամասնության մեջ գերիշխում են նվաստացած ու անարգված, անօգնական վիճակին բնորոշ դիրքորոշումները: Ամենօրյա կյանքում տիրապետում է այսպես կոչված պրեզենտիզմը, երբ շարքային հայը հարկադրված ապրում է սոսկ գոյատևման մտահոգություններով, իսկ սեփական առողջության ապագան թվում է խիստ մռայլ ու լի տագնապներով:

Խիստ մտահոգիչ է և այն, որ առողջապահության, գիտության, կրթության և այլնի կառավարման համակարգում առաջացել է մասնագիտական առաջընթացի կապուղիների «խցանում», ի հայտ են եկել յուրօրինակ «արենախիցքեր», որոնք լրջորեն խոչընդոտում են երիտասարդ կադրերի մասնագիտական առաջխաղացումը պայմանավորող «արյան շրջանառությունը»:

Երիտասարդ բժիշկը կամ գիտնականը, դասախոսը, որ կողմնորոշված է դեպի մասնագիտական կարիերան, պետք է կարողանա դուր գալ ղեկավարությանը, սիրաշահել նրան, կանխատեսել և կռահել վերադասի անձնակենտրոն ձգտումներն ու հակումները: Նա պետք է տիրապետի իր մրցակիցներին խարդավանելու, ղեկավարության աչքում նրանց վարկաբեկելու «արվեստին»: Այլ կերպ ասած՝ «հաջողությունն» արդեն կախված է ոչ այնքան բժշկի մասնագիտական ունակություններից, տաղանդից, որքան իրեն հաջող վաճառելու հնարամտությունից: Ուրեմն՝ կարևորն արդեն դառնում է ինքն իրեն լավ վաճառել կարողանալը, ներկայացնելը, բժշկական ընտրանու մեջ ընդունվելը, այսինքն՝ «պահանջարկ վայելելը»: Այս երևույթը տարածված է նաև հասարակական կյանքի մյուս ոլորտներում: Թվում է, թե ամենուր՝ հասարակական և մասնագիտական հարաբերություններում կատարելագործվում է սոցիալական երեսպաշտության, կեղծավորության «տեխնիկան»:

Մասնագիտական վարկի և բարոյականության վերականգնումը, բժշկական, բուհական և գիտական կոլեկտիվների ինքնակառավարումը և ինքնամաքրումն այն է, ինչն իրավունք ունի հուսալու հայ հասարակությունը, վերանայելով իր հարաբերությունները՝ բժշկական, բուհական և գիտական հանրույթների հետ: Աշխատավարձը վճարվում է, իսկ հասարակական պատիվը շնորհվում է ոչ թե որոշակի բուժական կամ գիտական, բուհական հիմնարկությանը պատկանելու փաստի, այլ առողջապահության և գիտության, բուհական կրթության մեջ իրական ներդրումի, շարքային քաղաքացիներին որակյալ բժշկական և այլ սոցիալական ծառայություններ մատուցելու համար: Չպետք է նաև մոռանալ, որ բժիշկները, ինչպես նաև ուսուցիչները և գիտնականները միայն «ստեղծարար դասակարգի» հենարան չեն: Դրանք այն մարդիկ են, որոնք քաղաքացիական վեհ գիտակցության և ազգային բարոյականության արժեքների պահապաններն ու կերտողներն են:

Բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բնական և հասարակական գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ, ՌԴ բժշկատեխնիկական գիտությունների, բնական գիտությունների եվրոպական ակադեմիայի ակադեմիկոս Սասուն Խաչատուրի Գրիգորյանն այդպիսի եզակի մարդկանցից մեկն է: Նա հեղինակ է 250-ից ավելի հրապարակված գիտական աշխատանքների, 6 ուսումնամեթոդական ձեռնարկների: Բժշկության ասպարեզում ունեցած ակնառու ծառայությունների համար բնական գիտությունների եվրոպական հանձնաժողովի կողմից (ք.Հանովեր) պարգևատրվել է Պաուլ Էրլիխի անվան դիպլոմով և ոսկե մեդալով:

Մանուկ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԱՆԿԱՐԾԱՀԱՍ ՊԱՏՈՒՀԱՄ՝ ԱԼԵՐԳԻԱ

Գարնան գալուստը նման է ավետիսի... Հարատևության բանբերը սիրելի ու փափագելի է շատերի համար: Գարունը, սակայն, որքան էլ նոր կյանքի սկիզբը նշանավորի, որքան էլ ծառ ու ծաղկունքի, մեռնող-հառնող բնության խորհրդանիշը հանդիսանա, միևնույնն է, ունի նաև իր բացասական, երբեմն նաև ցավալի դրսևորումները, որոնք հիմնականում արտահայտվում են առողջական խնդիրներով: Գարնանային տաք եղանակը հանգեցնում է արյան ճնշման տատանումների, ինչն էլ իր հերթին ծանր ազդեցություն է ունենում սիրտ-անոթային խնդիրներ ունեցող անձանց վրա: Բնության զարթոնքը, սակայն, որոշակի անակնկալներ է պարունակում նաև միանգամայն առողջ մարդու համար: Որպես կանոն, դա արտահայտվում է գարնանային ալերգիայի տեսքով: Մոլորակի բնակչության մոտ 20 տոկոսը տառապում է այդ հիվանդության տարատեսակ դրսևորումներից: Ալերգեն են համարվում տաք փոշին, միջատները, կենցաղում օգտագործվող քիմիական նյութերը, ընտանի կենդանիների մազերը, արևադարձային մրգերը, անգամ արևի ճառագայթները: Սեզոնային ալերգիայից, այսպես կոչված ալերգիկ ռինիտից, որն ավելի հայտնի է որպես խոտի տենդ, յուրաքանչյուր տարվա գարնան ամիսներին տառապում է ավելի քան 250 միլիոն մարդ: Իսկ դրա հիմնական մեղավորները բարդու բմբուլները, փոշին և ծաղկափոշին են: Բարդու բմբուլն ինքնին ալերգեն չէ, սակայն այն կարող է իր վրա ունենալ ծաղկափոշի: Հենց դա էլ ալերգիկներին հարկադրում է հազալ ու փռշտալ: Ալերգիկ ռինիտը դրսևորվում է շնչառության դժվարացմամբ և քթից հեղուկի արտազատմամբ: Հարբուխը և արցունքները օրգանիզմի բնական ռեակցիան են ի պատասխան օտարածին մարմինների ներթափանցման: Արտադրելով հեղուկ՝ օրգանիզմը ձգտում է հնարավորինս արագ ազատվել «անկոչ հյուրերից», որոնք, օրգանիզմ թափանցելով շնչուղիներով, հայտնվում են նաև բերանի խոռոչում: Գարնանային ալերգիայի հիմնական պատճառը ծաղկափոշին է: Այդ փոքրիկ մասնիկներն արտադրում են ծառերը, խոտերը և ծաղիկները այլ բույսերի փոշոտման համար: Անգամ թեթև քամու ժամանակ, դրանք շնչելու միջոցով հայտնվում են մարդու քթի խոռոչում: Իմունային համակարգը ծաղկափոշին ընկալում է որպես օտար մարմին և սկսում է արտադրել հակամարմիններ, նյութեր, որոնք պայքարում են օրգանիզմ ներթափանցած բակտերիաների և այլ մասնիկների դեմ: Այդ հակամարմինները «հարձակվում» են ծաղկափոշու վրա, ինչի արդյունքում էլ արյան մեջ արտադրվում է «գիստամին» կոչվող հատուկ քիմիական նյութ: Հենց արյան մեջ «գիստամին»-ի առկայությունն է առաջացնում հարբուխ, աչքերի բորբոքում և ալերգիայի այլ ախտանիշներ: Գարնանային հիմնական ալերգեններն են ծառերը, խոտերն ու թփերը: Ալերգիայի ախտանշանները, որպես կանոն, ուժեղանում են քամոտ եղանակին, և ճիշտ հակառակը, դրանց քանակն էապես նվազում է անձրևոտ օրերին, քանի որ անձրևը մաքրում է ալերգենները: Գարնանային ալերգիան ուղեկցվում է հարբուխով, աչքերի բորբոքումով, փռշտոցով, հազով, աչքերի տակ հայտնվող սև շրջանակներով: Սակայն դրանք ամենևին էլ ալերգիայի ամենավտանգավոր ախտանիշները չեն: Ալերգիկ ռինիտի ամենավտանգավոր դրսևորումը բրոնխիալ ասթման է, որի ժամանակ նեղանում են շնչուղիները, ինչը դժվարացնում է շնչառությունը, առաջացնում շնչահեղձություն, հազ և խռխռոց:

Բուժումը

Հիվանդության դեմ պայքարի հիմնական միջոցը յուրահատուկ իմունաթերապիան է, որի արդյունքում օրգանիզմից դուրս են բերվում ալերգիկ ռեակցիա առաջացնող հակամարմինները: Գոյություն ունի ալերգիկ ռինիտի բուժման երկու հիմնական մեթոդ, բուժում դեղամիջոցներով և ալերգենի, այսինքն՝ ալերգիա առաջացնող գործոնի հեռացում: Դեղամիջոցները խոչընդոտում են օրգանիզմի կողմից հատուկ նյութերի «գիստամին»-ի արտադրումը, որոնք ստեղծում են ալերգիկ ռեակցիա: Ավանդական եղանակը հակագիստամինային միջոցների ընդունումն է, որը, սակայն, այնքան էլ արդարացված չէ (տևական ընդունման դեպքում դրանք կորցնում են իրենց արդյունավետությունը, օրգանիզմը սովորում է դեղամիջոցին): Իսկ հարբուխի դեմ կիրառվող կաթիլային միջոցները կարճաժամկետ ազդեցություն են ունենում, դրանց երկար ընդունումը կարող է առաջացնել օրգանիզմի կախվածություն դեղամիջոցից: Բացի այդ, դրանք ընդամենը

վերացնում են հետևանքը, լորձաթաղանթի խանգարումները, սակայն, չեն ազդում ալերգիկ ռինիտի պատճառի վրա, այսինքն՝ քթի լորձաթաղանթի վրայից չեն հեռացնում շնչուղիներ ներթափանցած ալերգենները: Ենթադրաբար ամենաարդյունավետ միջոցը քթի լորձաթաղանթի վրայից ալերգենի հեռացումն է, այսինքն՝ քթի լվացումը, որը կատարվում է համապատասխան դեղամիջոցների օգնությամբ: Դրանք մաքրում են քթի խոռոչն օտար մարմիններից՝ վերացնելով ալերգիկ ռինիտի բուն պատճառը՝ ծաղկափոշին կամ այլ օտար մարմինները, որոնք օդի հետ ներթափանցում են քթի խոռոչ: Ալերգիայի բուժման համար առաջին հերթին պետք է հստակ ախտորոշում, որից հետո արդեն բժշկի կողմից նշանակված համապատասխան դեղամիջոցներ:

Աշխարհաբեկ ԻՎԱՆՅԱՆ

ՐԱՖՖԻՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայ ազգային-ազատագրական շարժումների և Հայկական հարցի առաջ բերած խնդիրների անշեղ պատասխանների որոնմանն ու լուծմանն իր ամբողջ կյանքը նվիրեց մեծ պատմավիպասան և հրապարակախոս Ռաֆֆին: Հայկական հարցի լուծման Ռաֆֆու տեսակետը բխում էր նրա այն ընդհանուր ըմբռնումից, թե բռնատիրության ենթակա ազգը միայն բռնության շղթաները ջարդելով կարող է գտնել իր ազատությունը, քանզի «...ազատություն տրվում է այն ազգերին, որոնք իրենց ազատությունը սրով պաշտպանել գիտեն: Առանց արյունի ազատություն չկա, որպես առանց զոհերի փրկություն»:

Իր բազում հոդվածներում, «Ճանապարհորդություն Թիֆլիսից մինչև Ագուլիս» ուղեգրության մեջ, «Ձալալեդդին» վիպակում, վերլուծելով ազատագրական շարժման իրական հանգամանքները և միանգամայն անիմաստ ու անհեռանկար համարելով Հայկական հարցի լուծման եվրոպական դիվանագիտության ուղին, Ռաֆֆին առաջադրում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարը՝ արևմտահայության գլխավոր խնդիրը համարելով այդ գաղափարի «անդադար և անընդհատ նախապատրաստությունը»: Այդ ծրագրի գեղարվեստական արտահայտություններն էին մասնավորապես «Խենթը» և «Կայծեր» վեպերը:

1879 թ. պատասխանելով հետադիմականներին, որոնք տիրահաճ քարոզչությամբ էին զբաղված և երկնչում էին ապստամբական ելույթներից, Ռաֆֆին հեգնում էր. «...անշարժության այդ վարպետները, ես համոզված եմ, կցանկանային, որ ամբողջ մարդկությունը մումիաներ լինեն և երբեք չփոխվեին...»:

Պատասխանելով Հայկական հարցի լուծումը զենքով իրականացնելու պահպանողականների հարուցած այն մեղադրանքին, թե դրանով ավելի է վտանգվում ժողովրդի կյանքը, և որ անհրաժեշտ է բարենորոգումների հասնել դիվանագիտական բանակցությունների ճանապարհով, Ռաֆֆին գրում էր, որ, ընդհակառակը, միայն բողոքը, ոտնահարված շահերի գիտակցումը և պայքարը դրանց վերականգնման համար ամեն մի ազգի կենսունակության և քաղաքական հասունության գրավականն են, որ ամենուրեք կույր նախապաշարմունքը, ստրկական համակերպությունն ու բթացած անշարժությունը խորշանք ու զայրույթ պիտի առաջացնեն միայն: Կարևորելով ազգային կյանքի արմատական վերակառուցման գաղափարը՝ նա պաշտպանում էր այն տեսակետը, որ այդպիսի վերակառուցումը պետք է կատարվի միայն ներքևից, քանզի երբ «ժողովուրդը ինքն է բողոք բարձրացնում, թե զենքով և թե խոսքով... դրան ասում ենք, թե ազատության զգացմունքը արմատիցն է ծագում, ամբոխի սրտիցն է բխում, ցածրից վեր բարձրանում»:

Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանի «բռնության ընդդեմ» տեսակետի հետ համերաշխ Ռաֆֆին մի տեսակ կամուրջ էր հայ հեղափոխական-դեմոկրատի և լիբերալ Գր. Արծրունու միջև:

Ռաֆֆին դատապարտում էր օտարատիրության լուծը հանդուրժող արևմտահայության տիրահաճ գործիչներին և պահանջում, որ միայն ազգովին կռիվը կարող է բացել ազատության ճանապարհի գոցված դռները: «Հավատարիմ հպատակության մի այնպիսի պետության վերաբերմամբ, որպես Թուրքիան է,– գրել է Ռաֆֆին,– նշանակում է կույր հնազանդություն, այսինքն անտրտունջ տանել բռնակալի բոլոր բարբարոսությունները»:

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը համարելով անպետք դեղատոմս ապաքինում պահանջող հայոց դարավոր վերքերի համար՝ պատմավիպասանն այն կարծիքին էր, որ արևմտահայերը «նախապատրաստված չէին ժամանակից մեծ օգուտ քաղելու և այդ պատճառով չհասան իրենց նպատակին, թեև ոմանք Բեռլինի վճռի 61-րդ հոդվածի մեջ ոսկու հանք են տեսնում: Այդ հանքը մեզ շատ չէ շլացնում... Մենք մեկ հանք ենք ճանաչում, որից կարելի է ստանալ ցանկացած ոսկին, եթե այդ հանքն անդադար և անընդհատ կերպով կբովագործեր. դա կոչվում է նախապատրաստություն: Եվ Տաճկաստանի հայոց խնդիրը պետք է կայանա այսուհետև անդադար և անընդհատ նախապատրաստության գործի մեջ, որպեսզի նրանք կազմ ու պատրաստ հանդիպեն այն մեծ օրվան, երբ կրկին անգամ կզարկե ազատության ժամը: Իսկ այդ օրը կկրկնվի, և շատ անգամ կկրկնվի... գուցե շատ հեռու չէ մեզանից...»:

Փաստորեն Ռաֆֆին առաջադրում էր նախապատրաստական մի ծրագիր և Արևմտյան Հայաստանի տարածքները հանձնում հեղափոխական քարոզիչների ուխտագնացությանը, որոնք ժողովրդին ուսուցանում են ազգային մաքառման գիտությունը, սերմանում գաղափարական այն կայծերը, որից ապագայում պիտի բռնկվեին ազգային-ազատագրական հեղափոխության բոցերը: «Կայծերը» Ռաֆֆու գաղափարական կտակն էր հայ երիտասարդությանը, որի վրա նահատակվելու երդում տվեց պայքարող ֆիդայի-հայդուկը: Տասնամյակներ շարունակ «Խենթի» և «Կայծերի» հերոսները (Վարդան, Ասլան, Կարո և ուրիշներ) ընտանեկան ու ընկերական հավաքույթների խոսակցության առարկա էին, և, ինչպես վկայում են ժամանակակիցները, այդ վեպերի ընթերցումների անմիջական ազդեցությամբ կազմվում էին հայդուկային կամավորական խմբեր և մեկնում «Երկիր»՝ զինվորագրվելու արևմտահայության դիմադրական շարժումներին:

Առաջ քաշելով ըմբոստության նախապատրաստության իր տեսությունը՝ Ռաֆֆին հիմնավորում էր այդ տեսությունը՝ ամեն պահ չէ, որ հարմար է զենքի դիմելու համար, հարկավոր է խստորեն հաշվի առնել ստեղծված կացությունը, ուժերի քանակական և որակական հարաբերակցությունը: Նա այդպիսի հարմար պահ է համարել 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, երբ բալկանյան սլավոնները ռուսական արշավող զորքի աջակցությամբ փշրում էին թուրքական շղթաները: Ռաֆֆին ցավ էր ապրում, որ արևմտահայերը պատերազմը նախապատրաստված չդիմավորեցին: Մեծ գրողն այն համոզմունքն ուներ, որ եթե ժողովրդի կենսունակ ուժերը նախապատրաստված լինեին և երկրում ապստամբական գործողություններ սկսեին, ապա արևմտահայությունը ռուսների օգնությամբ կթոթափեր թուրքական լուծը:

Ռաֆֆին մերկացնում էր թուրքական պետականության խարդավանքները, անզիջում հետևողականությամբ բացահայտում պատրանքաշատ այն մտայնությունը, որ փրկության շավիղներ էր որոնում Օսմանյան կայսրությունում: «Այդ ցնորք է,– գրում էր նա,– թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա... Մենք ունենք պատմություն, 850 տարվա պատմություն, թե ինչպես է մեզ հետ վարվել թուրքը: Նրա ամեն մի տողը արյունով ու արտասուքով է գրված: Ով որ ուրանում է պատմությունը, առաջ ինքն է կնքում իր դատապարտության դատակնիքը»:

Եթե Բեռլինի կոնգրեսից առաջ, կոնգրեսի ժամանակ և դրանից անմիջապես հետո հայ դիվանագետների պարզամտությունն ու փորձի պակասը նրանց հաճախ էին դնում քաղաքական նվաստացման հարափոփոխ իրավիճակների մեջ, ապա Ռաֆֆին շարունակում էր ստեղծված կացության խորագիտությամբ հավատ չընծայել եվրոպական դիվանագիտությանը և ապավինելով Ռուսաստանի ազատագրական առաքելությանը՝ միաժամանակ առաջ էր քաշում Արևմտյան Հայաստանի ազատագրությունը սրով, արյան գնով, զենքի ուժով ձեռք բերելու համարձակ ծրագիրը: Նա մերժում էր բոլոր նրանց, ովքեր կցանկանային Անդրկովկասն անջատված տեսնել Ռուսաստանից: Միաժամանակ քննադատում էր հայ գործիչներին ներկայացված «հայկական սեպարատիվիզմի» մասին ցարական իշխանությունների մեղադրանքը՝ գտնելով, որ ռուսական վարչակարգին մոլորության մեջ ձգողները եղել են մի քանի բախտախնդիր պաշտոնյաներ, որոնք իրենց իշխանությանը հավերժություն տալու համար սկսել են երևակայական ցնորքներ ստեղծել, թե, իբր, Անդրկովկասում գոյություն ունի մի «Մանուկ Հայաստան», որը կապեր ունի Տաճկաստանի հայոց գաղտնի կազմակերպությունների հետ, և որոնք իբրև թե բոլորը միասին ջանում են ընդհանուր ապստամբություն առաջ բերել Հայաստանում: «Կայծերի» հերոսները համեմատվեցին նարոդովոլականների՝ Ժելյաբովի և Կիբալչիչի հետ, իսկ Ն. Չեռնիշևսկու «Ի՞նչ անել» վեպի հերոսուհի Վերա Պավլովնայի երազի կրկնօրինակ հռչակվեց Ռաֆֆու վեպի հերոս Վարդանի երազը:

(շարունակելի)

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին շնորհվել է 2016թ-ի Որակի դիպլոմ (Diploma di Merito) և Եվրոպական մեդալ

Եվրոպական գիտարդյունաբերական պալատի որոշմամբ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Համբարձումյանին շնորհվել է 2016 թ. Որակի դիպլոմ (Diploma di Merito) և Եվրոպական մեդալ: Այս պարգևը շնորհվում է գիտության, կրթության և մշակույթի բնագավառում ունեցած մեծ վաստակի համար: Պարգևն արտոնություններ է տալիս աջակցություն ստանալ բոլոր պաշտոնական անձանցից:

Սերգեյ Համբարձումյանի հետազոտությունների բնագավառն է՝ հոծ միջավայրի մեխանիկա, թաղանթների և սալերի տեսություն, տարամոդուլ առաձգականության տեսություն, բարակ մարմինների էլեկտրամագնիսաառաձգականություն, միկրոպոլյար առաձգականության տեսություն:

Սերգեյ Համբարձումյանը Աստղագնացության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս է, Միջազգային ճարտարագիտական ակադեմիայի պատվավոր ակադեմիկոս, Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի ակադեմիկոս, Հայաստանի փիլիսոփայական ակադեմիայի պատվավոր անդամ, Գիտության, կրթության, արդյունաբերության և արվեստի միջազգային ակադեմիայի անդամ, Պենինսուլայի ինֆորմատիկայի և գործարարության ինստիտուտի պատվավոր պրոֆեսոր, Երևանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի պատվավոր պրոֆեսոր, ԱՄՆ-ի ճարտարագետ մեխանիկների ընկերության անդամ, Բրատիսլավայի համալսարանի պատվավոր դոկտոր, Ռուսաստանի կիրառական և տեսական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ, Սլովակիայի գիտությունների ակադեմիայի Մեխանիկների ընկերության պատվավոր անդամ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ:

Եվրոպական գիտարդյունաբերական պալատն ստեղծվել է 1992 թ. և գրանցված է Եվրոպայում որպես ոչ առևտրային, ոչ քաղաքական ասոցիացիա, որի նպատակն է ամրապնդել միջազգային գիտական, մշակութային և տնտեսական կապերը: Եվրոպական գիտարդյունաբերական պալատը ակտիվ համագործակցում է առաջատար կրթական, գիտական, և արտադրական կենտրոնների, եվրոպական առևտրաարդյունաբերական պալատների, ասոցիացիաների, փոքր և միջին ձեռնարկությունների հետ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Հայկական կոնյակը և Ուինսթոն Չերչիլը

Անցյալ տարվա հոկտեմբերի 29-ին Ուինսթոն Չերչիլի մահվան 50-ամյակի կապակցությամբ հատուկ միջոցառում է կազմակերպվել լոնդոնյան «Սոթբի» աճուրդային տան սրահում, որի ընթացքում աճուրդի են հանվել խմիչքների, սիգարների և հագուստի՝ Չերչիլի նախասիրած «բրենդները»: Ուշադրության կենտրոնում են եղել, ինչպես նշել է լոնդոնահայ կրթական գործիչ, խմբագիր Ասատուր Կյուզելյանը «Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի փետրվարի 13-ի համարում, հատկապես հայտնի քանդակագործ Օսկար Նեմոնի՝ Չերչիլի արձանը և տասնամյակների հնության հայկական «Արարատ» բրենդիի (կոնյակի) շիշն իր ուրույն պատմությամբ: Տարիներ առաջ Քրիստիի աճուրդի տանն այդ շիշը 15+ հազար անգլիական ֆունդով վաճառվել էր: Համաձայն փաստաթղթերի՝ այն լցված է եղել Չերչիլին Ստալինի մատակարարած կոնյակի միևնույն տակառից: Այդ բացառիկ շիշը Սոթբիին էր նվիրել ՀՀ նախկին վարչապետ և այժմ Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան, դոկտ. Արմեն Սարգսյանը: Այն, ինչ կատարվել է աճուրդի օրը, գերազանցել է բոլորի ակնկալիքները: Յոթանասունամյա հնությամբ շիշը վաճառվել է 120 հազար դոլարով: Աճուրդի մասնակիցները հիացական խոսքերով են արտահայտվել «Արարատ» կոնյակի, Հայաստանի և ընդհանրապես հայերի մասին:

Իսկ ի՞նչ պայմաններում է առաջին անգամ Չերչիլը համտեսել հայկական կոնյակը հարցին Կյուզելյանը պատասխանում է.

«Կինս՝ Վիվիենը, ու ես հաճույքն ենք ունեցել երկար տարիներ՝ սկսած 1960-ականների վերջերից վայելելու Չերչիլի դստեր՝ Սառայի բարեկամությունը: Երբ առաջին անգամ մեր տուն եկավ, մեր հյուրասենյակում նկատեց «Արարատ» մակնիշի հայկական կոնյակի շիշը և զարմանքով նայելուց հետո ասաց. «1945-ից սկսած մինչև իր մահը հայրս այդ կոնյակն էր խմում: 1945 թվի Յալթայի փետրվարյան կոնֆերանսի օրերին մի օր ճաշից հետո Ստալինը հարցնում է Չերչիլին, թե ինչ խմիչք է ցանկանում խմել:

«Կուզենայի բրենդի խմել սիգարիս հետ»,- պատասխանում է Չերչիլը: Ստալինը նրան «Արարատ» կոնյակ է հյուրասիրում, լավագույն հայկական բրենդին: Չերչիլը «սիրահարվում» է խմիչքին և հարցնում, թե որտեղից կարող է ձեռք բերել դրանից մի քանի շիշ: Ստալինը Մ. Բրիտանիայում սովետական դեսպանին հրահանգում է վարչապետին ամեն ամիս մի արկղ (12 շիշ) «Արարատ» ուղարկել: Նույնիսկ հորս մահվանից հետո մենք շարունակում էինք ստանալ այդ արկղերը: Միայն մոտ 10 տարի անց նրա մահվանից դեսպանատանը ինչ-որ մեկը գլխի է ընկնում, որ այդ արկղերն արդեն վախճանված մարդու հասցեով են ուղարկվում, և այդ օրվանից, դժբախտաբար, մենք դադարեցինք ստանալ հայկական այդ կոնյակները: Ես էլ էի շատ սիրում ընպել դրանք»:

«Այդ օրը ճաշից հետո սեղանին մնաց միայն «Արարատի» դատարկ շիշը» նախադասությամբ ավարտում է իր հոդվածը Ասատուր Կյուզելյանը:

Ճապոնիայում 80-ն անց տարեցների թիվը հասել է 10 միլիոնը

Ճապոնիայում 80-ն անց բնակիչների թիվը գերազանցել է 10 միլիոնը, իսկ ճապոնացիների երեք քառորդից ավելին 65 տարեկանից մեծ են, այդ մասին վկայում են երկրի ներքին գործերի նախարարության տվյալները: Տվյալ վիճակագրությունը հրապարակվում է յուրաքանչյուր տարի ազգային տոնի՝ Ծերությանը հարգանքի տուրք մատուցելու օրվա առթիվ: 80-ն անց ճապոնացիների ընդհանուր թիվը 10.2 մլն է կամ երկրի ողջ բնակչության 7.9 %-ը: Դա ամենաբարձր ցուցանիշն է 1950-ից ի վեր, երբ սկսվել է այս վիճակագրության հաշվարկը: Ճապոնիայի բնակիչների 12.9 %-ի կամ 16.4 մլն մարդու տարիքը 75 և ավելի է: Մոտ 33.8 մլն մարդ 65-ն անց է: Նրանց մեծամասնությունը՝ մոտ 19.2 մլն-ը, կանայք են: 65 տարեկանից բարձր տարիք ունեցող տղամարդկանց թիվը մոտ 14.6 մլն է:

Երկրի 65-ն անց մոտ 6.8 մլն բնակիչ աշխատանք ունի:

Արեգակնային համակարգից դուրս հայտնաբերվել է երեք մոլորակ, որոնց վրա կարող է կյանք լինել

Աստղագետները հայտարարել են Արեգակնային համակարգին համեմատաբար մոտ գտնվող երեք մոլորակների հայտնաբերման մասին, որոնց վրա կարող է կյանք լինել, տեղեկացնում է «Արմենպրեսը»՝ հղում անելով BBC-ին:

Հետազոտողներն իրենց աշխատանքը հրապարակել են «Nature» հանդեսում: Նրանց տվյալներով երեք մոլորակները, որոնց վրա կարող է կյանք հայտնաբերվել, գտնվում են Երկրից 39 լուսային տարի հեռավորության վրա՝ TRAPPIST-1 համակարգում, որը գտնվում է Ջրհոսի համաստեղությունում՝ դարչնագույն թզուկի մոտ:

Բելգիայի Լիեժի համալսարանից Մայքլ Գիլոնի խոսքով աստղագետների առջև այժմ բացվում է բացառիկ, աստղային դիտարկումների պատմության մեջ առաջին հնարավորությունը կյանքի քիմիական հետքեր հայտնաբերելու Արեգակնային համակարգի սահմաններից դուրս:

Դա հնարավոր է, որովհետև հայտնաբերված մոլորակները բավականաչափ մոտ են գտնվում Երկրին, և դրանց մթնոլորտները հնարավոր կլինի վերլուծել արդի տեխնոլոգիաների միջոցով:

Բարի առակագիրը

Ռուս նշանավոր առակագիրը շատ բարի մարդ էր, և հաճախ գովաբանում էր նույնիսկ թույլ գրվածքները: Մի անգամ մի անտաղանդ բանաստեղծ իր գրքի առաջաբանում մեջբերեց Իվան Կռիլովի դրական գնահատականն իր բանաստեղծությունների մասին:

- Տեսնո՞ւմ ես, Իվան Անդրեևիչ, ինչ էլ ճարպկորեն օգտագործեց քո բարությունը: Հիմա այդ անտաղանդն ամեն առիթով պետք է բարձրաձայնի, որ դու գովել ես իրեն:

- Դե, լավ, մեծ դժբախտություն չէ: Չէ՞ որ բոլորը գիտեն, որ առակներ եմ գրում:

☺

Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ը նշանավոր բանաստեղծ Նիկոլյա Բուալոյին կարդաց իր բանաստեղծությունները և ապա խնդրեց Բուալոյին ասել կարծիքն իր հորինվածքների մասին:

Բուալոյի գնահատականը չափազանց նրբանկատ էր և հանդուգն.

- Ձերդ մեծություն, Ձեզ համար անկարելի ոչինչ չկա: Դուք ցանկացել եք գրել վատ բանաստեղծություններ, և դա հրաշալի հաջողվել է Ձեզ:

Չճանաչեց

Սոֆյա Ստախովիչը հյուր էր Յասնայա Պոլյանայում: Մի երեկո նա ներկաների համար սկսեց հատվածներ կարդալ Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» վեպից: Հանկարծ դահլիճ մտավ Տոլստոյը: Ստախովիչը դադարեց կարդալ և հայացքը հառեց գրողին:

- Այդ ի՞նչ էիք կարդում, կարծում եմ՝ վատ չի գրված:

- Մի՞թե դուք չճանաչեցիք Ձեր գրածը: Ախր, ես հատված էի կարդում Ձեր «Պատերազմ և խաղաղություն»-ից:

Տոլստոյը հիասթափված թափ տվեց ձեռքը և դուրս եկավ դահլիճից:

☺

Լավատեսն ու վատատեսը դատողություններ են անում բարձր հարկերի, անբացատրելի կենցաղային ծառայությունների մուծումների չափերի մասին: Հետևությունը մեկն էր, լավ կյանքի հույս չկար:

- Այս բարձր հարկերի, վճարումների այս խելագար չափերի պայմաններում մենք շուտով մուրացիկ կդառնանք,- եզրակացնում է լավատեսը:

- Մուրացի՛կ,- ծաղրում է վատատեսը,- ների՛ր, խնդրում եմ, իսկ ումի՞ց ես մուրալու:

☺

- Բացատրեք, խնդրեմ, թե ինչպես եք վրաերթի ենթարկել տիկնոջը:

- Հազար ասացի, ես նրան վրաերթի չեմ ենթարկել: Մեքենան արգելակեցի՝ ճանապարհը զիջեմ իրեն: Սա էլ այնպես զարմացավ, որ կորցրեց գիտակցությունը:

☺

- Մեր պապիկն արդեն հինգերորդ անգամ փոխում է կտակը և նորը գրում:

- Ինքն է մեղավոր, ով էր նրան ստիպում ամուսնանալ մայրենի լեզվի ուսուցչուհու հետ:

☺

- Ուրիշի կնոջը տանելը դժվար չէ: Շատ բարդ է նրան հետ ուղարկելը:

☺

- Ձեյնաբ, Ջամիլյա, Գյուզել, Սահդա, Հաֆիզա, Ջուհրա, Լեյլա, Ջուլֆիյա, Գյուլչեհրայ:

-Ո՛չ, ո՛չ, սա «Անապատի սպիտակ արևը» ֆիլմից պատառիկ չէ, պարզապես վաղ առավոտյան ներկա-բացակա են անում սուպերմարկետի աշխատակցուհիներին:

☺

Մի դժբախտ հարբեցող կար, հենց որ խմում էր, առավոտյան հայտնվում էր սթափարանում: Մի օր որոշեց առնել կես լիտր և խմել տանը: Ասածը արած է: Գնեց կես լիտր օղի, եկավ տուն, հանվեց, մտավ վերմակի տակ ու խմեց: Առավոտյան աչքերը բացեց սթափարանում:

Մոտենում է ոստիկանին և հարցնում.

-Ախր, այս ո՞նց պատահեց, ես օղի խմեցի տանը՝ վերմակի տակ…

-Այո՛, այո՛, այդպես էլ կա, մենք քեզ վերցրինք, երբ, վերմակով փաթաթված, գնում էիր երրորդ շշի հետևից:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 29.06.2016 թ.: Տպաքանակը՝ 500: gitutyun@sci.am "ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА